



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/1807-2022

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-124-23.12.2021-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 74 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

**«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-124-23.12.2021-ԱՍ-011/0) ՎԵՐԱ-
ԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ**

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափը բարձրացնել՝ 68000 ՀՀ դրամից դարձնելով 100000 ՀՀ դրամ:

Այդ կապակցությամբ ՀՀ կառավարությունը հայտնում է, որ.

1. ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավա-
նության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի համաձայն՝ կառավարու-
թյունը մինչև 2026 թվականը քայլեր է ձեռնարկելու նվազագույն աշխատավարձը 85.000 ՀՀ
դրամ սահմանելու ուղղությամբ: Նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական
բարձրացումն ապահովվելու է՝ *հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները*:
Այս կապակցությամբ յուրաքանչյուր տարի պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի
քննարկման արդյունքներով նվազագույն աշխատավարձի բարձրացման համապատասխան
հնարավորության առկայության պարագայում՝ նախատեսվում է «Նվազագույն ամսական
աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Այլ կերպ ասած, նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացումն անհրաժեշ-
տաբար պետք է ուղեկցվի համապատասխան տնտեսական **հնարավորություններով՝ որպես
լրացուցիչ ծախսի ֆինանսավորման աղբյուր և հիմք, մինչդեռ տվյալ դեպքում պարզ չէ,
թե մակրոտնտեսական ցուցանիշների ինչպիսի փոփոխություններ են հիմք
հանդիսացել խնդրո առարկա նախաձեռնության համար:**

2. Նախագծի ընդունման դեպքում ՀՀ-ում նվազագույն աշխատավարձը կկազմի
միջին աշխատավարձի մոտ 50%-ը, ինչը, կարծում ենք, բավական բարձր է և կարող է
հակադարձ ազդեցություն ունենալ տնտեսական զարգացման վրա, հատկապես, եթե
հաշվի առնենք գործազրկության ներկայիս բարձր մակարդակը երիտասարդության և

հասարակության ոչ փորձառու (low-skilled) ներկայացուցիչների շրջանում: Այդ մասին են վկայում նաև ԱՄԿ-ի, ՏՀԶԿ-ի, ԱՄՀի-ի և ՀԲ-ի համատեղ վերլուծության¹ արդյունքները, ըստ որի նվազագույն աշխատավարձի օպտիմալ մեծությունը պետք է լինի միջին աշխատավարձի 25-35%-ի սահմաններում:

3. Նվազագույն աշխատավարձի շեշտակի բարձրացումը կարող է ուղեկցվել փաստացի արձանագրվող աշխատաժամերի աճով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագիծը չի անդրադարձել գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափին՝ նախագծի ընդունումը կարող է ուղեկցվել նաև ոչ լրիվ դրույքով աշխատողների թվաքանակի աճով: Այս ռիսկերը էական կարող են լինել ՀՀ-ի դեպքում, որտեղ ըստ ԱՄԿ տվյալների²՝ ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակն աշխարհում ամենաբարձրերից մեկն է (առանց գյուղատնտեսության ոլորտի՝ մոտ 25%, իսկ գյուղատնտեսության ոլորտը ներառյալ՝ ավելի քան 50%): Հաշվի առնելով նկարագրված ռիսկերը՝ բարեփոխման արդյունքում ակնկալվող դրական ազդեցությունները կարող են չեզոքացվել:

4. Զարգացող երկրներում, որտեղ արտահանումը հիմնված է աշխատատար (labor-intensive) ճյուղերի վրա, նվազագույն աշխատավարձի շեշտակի աճը կարող է հանգեցնել տնտեսության մրցունակության նվազմանը և արտահանման ծավալների կրճատմանը: ՀՀ-ի դեպքում նշվածը կարևոր կարող է լինել, օրինակ, մշակող արդյունաբերության համար, քանի որ նվազագույն աշխատավարձ ստացողների մոտ մեծամասնությունը զբաղված է հենց այդ ոլորտում:

5. Նվազագույն աշխատավարձի՝ հատկապես մեծ չափով փոփոխությունները պարունակում են էական գնաճային ռիսկեր: Տարբեր վերլուծությունների համաձայն նվազագույն աշխատավարձի յուրաքանչյուր 10% ավելացումը կարող է հանգեցնել 0.3-0.7 տոկոսային կետ լրացուցիչ գնաճի³: Ընդ որում ազդեցության չափերը կախված են աշխատաշուկայի մրցակցության աստիճանից, աշխատողների բանակցային ուժից և աշխատաշուկայի հավասարակշռության դիրքից: Բացի դրանից, բնականաբար նվազագույն աշխատավարձի բարձրացման փոխանցումը գներին կարող է էականորեն տարբերվել ըստ տնտեսության հատվածների, որոնցից հատկապես նշանակալի գնային ազդեցություններ

¹ “Boosting Jobs and Living Standards in G20 Countries”, A Joint Report by the ILO, OECD, IMF, and the World Bank, 2012

² “Women and Men in the Informal Economy: A Statistical Picture”, ILO, 2018

³ MacDonald D., Nilsson E., (2016), “The Effects of Increasing the Minimum Wage on Prices: Analyzing the Incidence of Policy Design and Context”, Upjohn Institute Working Paper 16-260

կարող են դիտարկվել հանրային սննդի և սպասարկման ոլորտներում, որտեղ առկա է ցածր աշխատավարձերով ոչ փորձառու աշխատողների կենտրոնացում:

6. Նախագծին կից ներկայացված հիմնավորումում նշված է՝

1) «Ըստ ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվության 3-րդ եռամսյակային գրաֆիկի² փաստացի գնաճը 2021 թ. կազմել է 8.4%...»: Իրականում այն փաստացի ցուցանիշը չէ, այլ ՀՀ ԿԲ-ի «ծրագրային» ցուցանիշն է, ինչն արտացոլված է նաև տողատակով նշված հղմամբ հրապարակված ՀՀ ԿԲ-ի համապատասխան փաստաթղթում.

2) «Ավելի ճշգրիտ հաշվարկներ հնարավոր է իրականացնել միայն լիազոր մարմնի կողմից վարվող եկամտային հարկի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա:»: Ըստ այդմ ստացվում է, որ նախագծով առաջարկվող փոփոխության համար անհրաժեշտ բոլոր հաշվարկները ճշգրիտ և վերջնական արված չեն:

Նշված պայմաններում նախագծի ընդունումը նպատակահարմար չէ:

7. Հարկ ենք համարում նշել, որ նախագծով ներկայացված առաջարկության ընդունման դեպքում անհրաժեշտ է բարձրացնել նաև՝

1) «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատողների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափերը.

2) պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի որոշման համար հիմք հանդիսացող բազային աշխատավարձի չափը (սահմանվում է յուրաքանչյուր տարվա բյուջեի մասին օրենքով) և (կամ) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տոկոսային հարաբերակցությունը՝ հաշվի առնելով, որ օրինակ վերը նշված հոդվածով սահմանված է, որ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսից և գերազանցել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 120 տոկոսը:

Բացի դրանից, Օրենքի 3-9-րդ հավելվածներով ներկայացված պետական ծառայության պաշտոն զբաղեցնող այն անձինք, որոնց հիմնական աշխատավարձի չափը որոշելու համար Օրենքի 3-9-րդ հավելվածներով սահմանված են «2.1» գործակցից ցածր գործակից, նվազագույն ամսական աշխատավարձը 100000 ՀՀ դրամ սահմանելու պարագայում կստանան 100000 ՀՀ դրամից ցածր աշխատավարձ:

Ասվածից հետևում է, որ պետք է փաթեթով ներկայացվեր նաև վերը նշված օրենքում (օրենքներում) փոփոխությունների նախագիծ:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անձի ամսական համախառն եկամտի՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով հաշվետու ամսվա համար սահմանված չափի 15-ապատիկը գերազանցող գումարից (սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն ամսական շեմ) կամ տարեկան համախառն եկամտի՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ սահմանված չափի 180-ապատիկը գերազանցող գումարից (սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն տարեկան շեմ) սոցիալական վճարներ չեն հաշվարկվում և փոխանցվում (գանձվում): Եթե անձը եկամուտ է ստանում մի քանի աղբյուրից (ստանում է ձեռնարկատիրական եկամուտ և աշխատավարձ), ապա հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների՝ նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված չափը գերազանցող գումարները (եթե այդպիսիք առկա են) մասնակիցներին վերադարձնելու կարգը սահմանում են հարկային մարմինը և ՀՀ կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը համատեղ հրամանով: Ուստի նախագծի ընդունման դեպքում փոփոխությունն ուժի մեջ մտնելու պահից կպահանջվի առնվազն վեցամսյա ժամանակահատված ՀՀ ՊԵԿ Էլեկտրոնային կառավարման եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգում սոցիալական վճարների ծրագրային ապահովման աշխատանքները կատարելու համար:

Անփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության
2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի 1-ին հոդվածում «68000» թիվը փոխարինել
«100000» թվով:

Հոդված 2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:»

Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:

2. Նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:»

Սույն նախագծով առաջարկվում է նվազագույն աշխատավարձի չափը սահմանել 100.000 ՀՀ դրամ: Սույն առաջարկի հիմքում դրված են մի շարք սոցիալ-տնտեսական հիմնավորումներ, մասնավորապես, նկատի ունենալով ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից՝ ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի հաշվակված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին և աղքատության մակարդակին վերաբերող տվյալները. Ըստ այդմ, 2021թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով առկա են հետևյալ ցուցանիշները¹.

Պարենային զամբյուղի արժեքը	
Տարեկան	431 796.6 դրամ
ամսական	35 983.0 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը	
Տարեկան	798 823.7 դրամ (գործակից 1.85)
ամսական	66 568.6 դրամ

Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ 2019 թ. ՀՀ ազգային վիճակետկոմ-ի կողմից 5184 տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով ունի հետևյալ պատկերը՝

	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 մեծահասակի հաշվով, դրամ
Պարենային զամբյուղի ամսական արժեքը	27 772.7 դրամ	30 927.4 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը	51 379.5 դրամ	57 215.7 դրամ (գործակից 1.85 1)

¹ https://armstat.am/file/article/sv_03_21a_6200.pdf

Իսկ արդեն ըստ ԱՎԿ հաջորդ վերաբերելի հրապարակման՝ 2-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով պարենային զամբյուղի արժեքը կազմում է 37 861 դրամ, սպառողական զամբյուղների արժեքը՝ 70 044 դրամ:

Ըստ ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվության 3-րդ եռամսյակային գրաֆիկի² փաստացի գնաճը 2021թ կազմել է 8.4 %, սպառողական գների ինդեքսը՝ 7.3 %, բնականոն գնաճը՝ 7.1%:

Միաժամանակ, 2022թ հունվարի 1-ից խմելու ջրի¹ խ/մ-ի գինը կթանկանա 20,47 դրամով, իսկ ՀԾԿՀ-ն չի բացառում, որ 2022 թ. փետրվարից Հայաստանում կրկին կբարձրանան էլեկտրաէներգիայի սակագները: Հարկ է նշել, որ աշխատավարձի ինդեքսավորման իրավական մեխանիզմի բացակայության պարագայում գնաճը էլ ավելի է բարդացնում COVID-19-ի և 44-օրյա պատերազմի արդյունքում ծայրահեղ ծանր վիճակում գտնվող մեր հայրենակիցների համար իրենց ամսական կարիքների պատշաճ կերպով հոգալու հնարավորությունը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ինչպես նաև շեշտակիորեն բաժրացող աղքատության մակարդակը ինչ-որ կերպ մեղմելու անհրաժեշտությունը, հատկապես «աշխատող աղքատ» կատեգորիայի անթույլատրելիությունը՝ առաջարկվում է բարձրացնել նվազագույն ամսական աշխատավարձի չափը՝ այն սահմանելով 100.000 ՀՀ դրամ:

Հարկ ենք համարում նաև ընդգծել, որ ներկայացված նախագիծը համահունչ է նաև կառավարության ծրագրի նպատակադրումներին, որով ստանձնել են պարտավորություն «նվազագույն աշխատավարձը սահմանել 85.000 դրամ, վերացնել ծայրահեղ աղքատությունը»:

Հարկ է նշել, որ թեև նախագիծը իրենից ենթադրում է ծախսերի ավելացում, սակայն հարկ է նշել, որ աշխատավարձի բարձրացված մասը՝ 32000 ՀՀ դրամը, ծախսերի և դրանց արդյունքում ձևավորվող հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների միջոցով կրկին վերադառնալու է պետական բյուջե: Ավելի ճշգրիտ հաշվարկներ հնարավոր է իրականացնել միայն փազոր մարմնի կողմից վարվող եկամտային հարկի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա:

² <https://www.cba.am/am/SitePages/mp2021gt.aspx>

